

## ԲԱՅԻ ԱՆՂԵՍ ՁԵԿԵՐԻ ՅՈՒՐԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՍՏՈՒՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

### Լ Ա. ՊԱՍՏՅԱՆ

Գեռևս գործառնող բարբառների և խոսվածքների գիտական քննությունն ու բարբառային նմուշների արձանագրությունը անհրաժեշտություն է:

Սասունի բարբառի առաջին և թերևս միակ ընդգրկուն ուսումնասիրությունը կատարել է Վ. Պետոյանը<sup>1</sup>: Հենվելով Հ. Աճառյանի և Ա. Ղարիբյանի՝ հայերենի բարբառների դասակարգման ձևաբանական և հնչյունաբանական սկզբունքների վրա՝ Պետոյանն ապացուցեց, որ Սասունի բարբառն ինքնուրույն բարբառ է, և հիմնավորված չէ վերջինիս ընդգրկումը Մշո բարբառի տիրույթ: Սակայն Սասունի բարբառի բազմաթիվ խոսվածքներից երկուսի՝ Գելիեգուզանի և Տալվորիկի խոսվածքների առանձնահատկությունների վրա հիմնված աշխատությունը չէր կարող ներկայացնել բարբառի ընդհանուր պատկերը: Այդ է պատճառը, որ պատմական Սասունի երեսուցից ավելի բնակավայրերից Աշնակ գյուղում հաստատված սասունցիների խոսվածքի ուսումնասիրությունը արձանագրում է լեզվական հետաքրքիր առանձնահատկություններ, որոնց չի անդրադարձել Վ. Պետոյանը:

Հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում քայն աչքի է ընկնել ձևախմբատային և քերականական կարգերի բազմազանությամբ: Սասունի բարբառում ևս քայն ունի դիմավոր և անդեմ ձևեր, որոնք ունեն դրսևորման ընդգծված տարբերություններ ինչպես ժամանակակից հայոց լեզվի, այնպես էլ այլ բարբառների համեմատությամբ:

Ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունվում է քայածների երեք հիմք՝ **ճերկայի**, **կատարյալի** և **դերբայական**: Ինչպես ընդհանուր հայերենում, այնպես էլ բարբառում բայահիմքերը լինում են պարզ և բաղադրյալ: Բարբառում դերբայական հիմքը նույնանում է **անորոշ դերբային**<sup>2</sup>՝ արձանագրելով միայն լծորդության փոփոխություն՝ *իլ>էլ*: Դերբայական հիմքից են կազմվում *ապատնի* և *ապատնի երկրորդ* դերբայները՝ *գարտալ-գարտալու-գարտալիկ*, *մեռնիլ-մեռնելու-մեռնելիկ*: Այն գործառնում է խոնարհման հարացույցում՝ կազմելով կատարելի ներկա և կատարելի անցյալ ժամանակաձևեր:

Անորոշի *իլ* և *ալ* վերջավորությունից առաջ ընկած մասը կազմում է *ճերկայի հիմքը*, որը կազմությամբ կարող է լինել *պարզ*՝ *գարտալ-գարտ*, *վազիլ-վազ* և այլն, կամ *բաղադրյալ*՝ *հասնիլ-հաս-ն-իլ*, *մրոդիլ-մր-ոդ-իլ*: Ներկայի հիմքից կազմվում են *անորոշ*, *ժխտական դերբայները*, ի խոնարհման բոլոր քայերի *ենթակայական դերբայը* և նույն խոնարհման պարզ քայերի *հարակատար*, *վաղակատար դերբայները*, *ճերկա ժամանակը*, ինչպես նաև նրանով բաղադրվող մյուս եղանակային ձևերը: Բարբառում *ճերկայի հիմքից* կարող է կազմվել նաև ի խոնարհման պարզ քայերի անցյալ կատարյալը:

**Կատարյալի հիմքերը** լինում են **ծա-ական** (բաղադրյալ) և **արմատական** (*պարզ*): **Ծա-ական** հիմքերն իրենց հերթին լինում են հիմքաձանցավոր և հերթազայական: Կատարյալի հիմքում **ծ-ն** բուն վերջադրային *հիմնաձանցային* նշանակություն ունի իլ լծորդության պարզ, բազմապատկական և երկ լծորդության պարզ քայերում, որ **-էծ**, **-ած** ճասմիկներն ավելանում են *ճերկայի հիմքի վրա*, այսպես՝ *վազիլ-վազ-վազէծ*, *գարտալ-գարտագարտալ*:

Պատճառաբան քայերի *ճերկայի* և *կատարյալի հիմքերը* նույնն են, և քանի որ կազմում են **ածանք** ծ ածանցք, կարելի է նախադրել, որ հիմքը **ծա-ական** է, այսպես՝ *հակծիլ-հակծ-հակծէծ*, *վախծիլ-վախծ-վախծէծ*, *մոծիլ-մոծ-մոծէծ* և այլն:

<sup>1</sup> Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Եր., 1954:

Հերթագայական են այն հիմքերը, որոնք կազմվում են քայածանցների և կատարյալի հիմքածանցների հերթագայությամբ:

Ն/ծ հերթագայություն ունենք ա խոնարհման սուկածանցավոր բայերում, ուր **ն**, **ա(ը)ն**, **են**, ածանցները համապատասխանաբար փոխվում են **ծ**, **ած**, **էծ** ածանցներով, այսպես՝ *քարանալ-քարան-քարած*, *թուլնալ-թուլն-թուլծ*, *մոռնալ-մոռն-մոռծ* և այլն:

Այլ լծորդության սուկածանցավոր բայերը անցյալ կատարյալում ունենում են **ա** հիմքով վերջավորություններ:

Կատարյալի հիմքում **ն/ր** հերթագայություն ունեն *դանիլ-դարեք*, *անիլ-տրեք*, *էնիլ-էք* անկանոն բայերը:

Կատարյալում **արմատական** (պարզ) հիմք են ունենում իլ լծորդության **ն** սուկածանցավոր բայերը: Այստեղ ա ածանցն ընկնում է, այսպես՝ *մղնիլ-մղն-մղ*, *ղէնիլ-ղէն-ղէս* և այլն, իսկ անցյալ կատարյալում ստանում են **(ը)ա** հիմքով վերջավորություններ:

Չ սուկածանցը բարբառը չի գիտակցում:

Կատարյալի հիմքից կազմվում են **ա** խոնարհման բայերի վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները, ի խոնարհման սուկածանցավոր բայերի վաղակատար, հարակատար, ապառնի երկրորդ դերբայները, նրանցից կազմված եղանակաժամանակային ձևերը, անցյալ կատարյալը և **ա** խոնարհման բայերի հոգնակի հրամայականը:

Իլ լծորդության չեզոք սեռի պարզ՝ *աբրիլ-աբրը*, *բարզիլ-բարզը*, *նաշիլ-նաշը* և այլն, և **-վ** կրավորական ածանց ունեցող բայերի՝ *սիրվիլ*, *հուզվիլ*, *քերվիլ*, *խօսվիլ* և այլն, անորոշի և կատարյալի հիմքերը չեն տարբերվում, այլ հանդես են գալիս իբրև ձևաբանական համանուններ:

Բարբառն արձանագրում է ութ՝ *անորոշ*, *կատարելի(ապառնի)*, *վաղակատար*, *հարակատար*, *ենթակայական*, *ժխտական*, *ապառնի երկրորդ* և *ձևի* դերբայներ: Գրաբարյան չորս՝ են, իմ, ալ, ուլ լծորդությունների դիմաց բարբառում առկա են երկուսը՝ **ալ**, **իլ**: Գրաբարյան են և ուլ լծորդությունների բայերը գրեթե ամբողջությամբ ներառվել են բարբառի իլ լծորդության բայերի մեջ. այսպես՝ *թողուլ>թողիլ*, *իջանեն>իճնիլ*, *ցանեն>ցանիլ*, *հասանիմ>հասնիլ*: Հանդիպում են նաև լծորդությունների փոխանցումներ, որոնք որակ չեն կազմում: Ե լծորդության մի քանի բայեր դարձել են **ա** լծորդության՝ *փայլեն>փիլալ*, *քայլեն>քէլալ*, *ժիծաղիլ>ձիզղալ*, *հաչան>հըճալ*, ուլ լծորդության *թողուլ* և *հեղուլ* բայերը հավասարապես գործածվում են թե՛ ու, թե՛ ի խոնարհմամբ:

Ժամանակակից հայոց լեզվում, «նկատի ունենալով դերբայական ձևերի տարբեր կիրառությունները և լեզվի կառուցվածքում դրսևորած տարբեր ֆունկցիաները»<sup>2</sup>, դերբայները բաժանվում են երկու խմբի՝ *կախյալ* և *անկախ*:

Առանձնահատուկ քերականական հատկանիշներ են դրսևորում *անորոշ* և *հարակատար* դերբայները, որոնք ունեն թե՛ *անկախ*, թե՛ *կախյալ* կիրառություններ: Ելնելով այս իրողությունից՝ սրանք կքննենք որպես *ընդհանրական դերբայներ*:

### Ընդհանրական դերբայներ

Անորոշ դերբայն ունի իլ և ալ վերջավորությունները: Իլ լծորդության բայերն ի խոնարհիչը պահում են միայն անորոշ և նրանից կազմված ներկա և անցյալ ժամանակային ձևերում: Խոնարհված և հոլովված մյուս ձևերում նրան համապատասխանում է է խոնարհիչը: Անորոշի իլ և ալ վերջավորություններից առաջ կարող են հանդես գալ քայական ածանցներ, որոնք կազմում են անորոշի ածանցավոր հիմքը: Հանդիպում են փոխանցումներ բայի խոնարհումների մեջ. միևնույն անորոշի հիմքի վրա կարող են դրվել և՛ ալ, և՛ իլ վերջավորություններ՝ առանց չեզոք կամ ներգործական իմաստների տարբերակման, օրինակ՝ *կօվալ-կօվիլ*, *ղէնիլ-ղէնալ*, *հաճիլ-հըճալ* և այլն: Վ. Պետոյանը Սասունի բարբառի քայական համակարգում *շարունակականի* առանձին ձևեր չի քննել: Մինչդեռ բարբառում անորոշ դերբայից կազմվում են եղանակաժամանակային ձևեր: Օժանդակ բայի հետ այն ձևավորում է *սահմանական եղանակի շարունակական ներկա* և *շարունակական անցյալ ժամանակները*:

<sup>2</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 241:

**Ա. Շարունակական ներկայի կազմությունը.** Անորոշ դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևով սահմանական եղանակի ներկա են կազմում Նոր Ջուղայի, Մարաղայի (Տոռլի) բարբառները, ինչպես օրինակ՝ *խաց էն տալ* (Նոր Ջուղա): *Անչընալ ըմ, կծիրէլ ըմ* (Մարաղա): Ներկայի կազմության այս ձևը հատուկ է նաև արևմտյան մի շարք բարբառների:

Անորոշ դերբայով ներկա ժամանակ կազմելու օրինակներ են հանդիպում նաև հայ մատենագիրների աշխատություններում: V դարի պատմիչ Եղիշեն «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքում գրում է. «Բազումք ի ձենց ի խորշակէ *յերբալը* սատակիցեն»<sup>3</sup>: Անորոշով ներկա ժամանակ է կազմում նաև Հովհան Մամիկոնյան պատմիչը, այսպես՝ «Դուք ինձ վնաս էք *ի տալ* յառնել, որ տաճարս այրել էք ի տալ»<sup>4</sup>:

Գործողությանը շարունակականության երանգ հաղորդելու համար Պոլիսի բարբառը դիմում է գոր մասնիկին: Խոսելով այս մասնիկի առաջացման մասին Ա. Այտընյանը գրում է. «Սահմանական ներկային եւ անկատարին վերջին ծայրը կոր մասնիկ դրուելով՝ կը ցուցանէ թէ գործողութիւնը կը շարունակուի, կամ թէ հիմակ ըլլալու վրայ է, եւ նոյն է տաճկերենի յօր մասնկան հետ»<sup>5</sup>:

Ըստ Հ. Աճառյանի՝ վերջինս թուրքերենի *yor* ածանցի նմանակումն է, որով «Տաճկերենի ազդեցությամբ հայերենի մեջ էլ կազմվել է շարունակական ներկայի (ինչպես նաև անկատարի) այս ձևը: ... Երևույթն սկսվում է միայն Բաբերդից ու Մալաթիայից և առաջանում է մինչև արևմտյան սահմանը (Ռոտտսթո)»<sup>6</sup>:

Իսկ ահա Սվեդիայի բարբառում «բուն և շարունակական ներկաների ու անկատար անցյալների հակադրությունը իրացվում է *գու/գէու* հերթազալությամբ»<sup>7</sup>:

Անդրադառնալով բայի խոնարհման բնագավառում բարբառների հանդես բերած տարբերություններին՝ Գ. Ջահուկյանը մի շարք բարբառների համար առանձնացնում է ներկայի կոր, կո, կոյ, նէ, նը և այլ մասնիկներով շարունակականի կամ ծագումով շարունակականի կազմության իրողությունը<sup>8</sup>: Ըստ էության վերոհիշյալ օրինակները գալիս են վկայելու, որ հայոց լեզուն պատմականորեն ունեցել է գործողության շարունակականության իմաստը փոխանցելու և արտահայտելու թե՛ անհրաժեշտություն, թե՛ կիրառություն:

Սասունի բարբառում *շարունակական ներկան* կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով և ցույց է տալիս.

ա) տվյալ պահին ընթացքի մեջ եղող և շարունակվող գործողություն, որը կարող է ընդգծվել կամ շեշտվել համապատասխան ժամանակի մակբայներով՝ *սրբրտան* (վաղ առավոտ), *միզան* (հիմա), *ըսօր* (այսօր), *լուսուն* (առավոտ) և այլն: Այսպես՝ *Սըբրտան ծուն իճնիլ ը տէգի վրէն*:

բ) Խոսելու պահին կատարվող և երկար ժամանակամիջոց ընդգրկող գործողություն: Այսպես՝ *ճրիլ ը գուր բօստան*:

գ) Ընդհանրապես և սովորաբար կատարվող, տվյալ անձին բնորոշ գործողություն, բնության երևույթներ: Օր լուսնալ ը ժամ վէծին:

դ) Մոտ ապագայում հաստատապես կատարվելիք գործողություն: Վաղ էրտալ ըմ քաղակ: Իրգուն խաղալ ինկ թուտ:

**Բ. Շարունակական անցյալի կազմությունը.** Շարունակական անցյալը կազմվում է անորոշ դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով և ցույց է տալիս.

ա) անցյալի որոշակի պահում ընթացքի մեջ եղած և շարունակվող գործողություն, որը կարող է նշվել, սահմանափակվել ժամանակի մակբայով կամ այլ պարագայական կապակցությամբ: Այսպես՝ ժամ մեզիձ չօրս ճուր սղը իկալ էր:

<sup>3</sup> Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1971, էջ 72:

<sup>4</sup> Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Եր., 1941, էջ 194:

<sup>5</sup> Ա. Այտընեան, Զմնական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Եր., 1987, էջ 98, 265:

<sup>6</sup> Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 1952-1965, հ. 4, էջ 97:

<sup>7</sup> Գ. Հանանյան, Սվեդիայի բարբառը, Եր., 1995:

<sup>8</sup> Տես Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 100:

բ) Անցյալում կատարված և որոշակի ժամանակամիջոց ընդգրկած գործողություն: Դարի մը աքրիլ ենկ Սասնաշէն:

գ) Անցյալի որոշակի ժամանակահատվածին բնորոշ սովորություններ, բնության երևույթներ, սովյալ անձին հատկանշական գործողություններ: Ըն քուր Ասդու առափօղ ուղի էր մէդր ու գարակ:

Բարբառում անորոշ դերբայն ունի նաև անվանական կիրառություն և ենթարկվում է ու հոլովման՝ յերկի, յերկէլու, յերկէլուն, (գ)յերկի, յերկէլում, յերկէլով:

Վերոհիշյալ հոլովածներին համապատասխան՝ խոսքի մեջ անորոշ դերբայը գործառնում է իբրև ենթակա, հատկացուցիչ, խնդիրներ և պարագաներ, անհրաժեշտության դեպքում կարող է ստանալ նաև էր, մէր հոգնակերտներ: Օր.՝ *Թոնիլ* տփար ը (ենթակա): *Խմէլու* ճուր ինկն ը պէրէ (հատկացուցիչ): *Քրզի խասլիլ* տփար ը (խնդիր): Կածէր ը *խաղալու* (պարագա): *Կլօրէլով* պէրին զփիղէր(պարագա):

Բայիմաստը շեշտելու կամ սաստկացնելու նպատակով անորոշը հաճախ է հարադրվում միևնույն բայի դիմավոր ձևի հետ: Այսպես՝ *Ըն ախպէր խմիլ զը խըմը, չըս հսկալը*:

Հարակատար դերբայ գրաբարում չունենք, այն միջին հայերենից սկսած հանդես է գալիս -ած վերջավորությամբ և կազմում է եղանակային ձևեր: Բարբառում հարակատար դերբայն ունի -ուգ վերջավորությունը: Հանդիպում է նաև հարակատարի -ած ձևը, սակայն վերջինս, լինելով գրական հայերենի ազդեցություն, առավել կիրառական է երիտասարդների խոսքում և չունի առաջինի լայն գործածությունը:

Հարակատարի -ուգ վերջավորությունը բնորոշ է հիմնականում կը ճյուղի որոշ բարբառների: Թեև հարակատարն ունի նաև *անվանական* կիրառություն, սակայն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նրա բայական գործառնությոը: Այն օժանդակ բայի հետ կազմում է սահմանական եղանակի բաղադրյալ երկու ժամանակածներ՝ հարակատար ներկա և հարակատար անցյալ:

Ուգ վերջավորությամբ բայական ձև է կազմվում թե՛ ներկայի, թե՛ կատարյալի հիմքից: Հարակատարը ներկայի հիմքից են կազմում իլ լծորդության պարզ, կրավորական, պատճառական, բազմապատկական բայերը՝ *բարզիլ-բարզուգ, սիրվիլ-սիրվուգ, խմծիլ-խմծուգ, մածնողիլ-մածնողուգ*:

Կատարյալի հիմքից հարակատար են կազմում իլ և ալ լծորդության ստակածանցավոր և ալ լծորդության պարզ բայերը՝ *խաղալ-խաղածուգ, մղնիլ-մղծուգ, թուլնալ-թուլծուգ, աղալ-աղածուգ*:

Պետք է նշել, որ -ուգ վերջավորությունն են ստանում ոչ քուր բայերը: Հարակատարի այդ վերջավորությամբ հանդես են գալիս հիմնականում ներգործական և չեզոք սեռի բայերը: Հարկ է նշել, որ բարբառն առհասարակ կրավորական վ ածանցը գործածելու մեծ հակում չունի և քերականական այս կարգը՝ գործողության կրավորականությունը, որոշակիացվում է շարահյուսական մակարդակում:

Ուգ ածանցով կերտված հարակատարի ձևերը բարբառում գործածվում են նաև որպես ածականներ, երբեմն էլ՝ որպես գոյականներ: Այսպես՝ անճրբուգ-ճարահատ, անընուգ-անոնը հասնող պտուղ, աշնուգ-սշնանը հասնող պտուղ, մաշուգ-մաշված և այլն:

Հարակատարի այդ ձևերով կազմվում են նաև բարդ բառեր, ուր այն հանդես է գալիս որպես երկրորդ բաղադրիչ՝ *պանշածողուգ-ձախորդ, մատլօզուգ-մատով լիզված* և այլն:

Հարակատարի բայական կիրառության սահմանափակությունը բխում է նրա իմաստային առանձնահատկություններից, արտահայտած գործողության վիճակային, հետևանքային բնույթից: *Ներգործական սեռի* հարակատար դերբայները, որոնք օժանդակ բայի հետ ներկա ժամանակածներ են կազմում, բարբառում կարող են արտահայտել նաև կրավորական իմաստ: Այս երևույթը դրսևորվում է նաև Մշո բարբառում\*:

\* Տե՛ս Մ. Բաղդասարյան-Շափազյան, Մշո բարբառը, Եր., 1950, էջ 109:

**Օրինակ՝ Ըն սաղ թվեր խիտուց ք.**

Չեզոք սեռի բայերի հարակատար դերբայները կաղաղ են օժանդակ բայի հետ կի-րառվել՝ արտահայտելով տվյալ սեռի իմաստը: Օրինակ՝ *Սերույ էրեզվորտ հարպուց ք.*

Հարակատար դերբայը խոսքում հանդես է գալիս նաև որոշիչ շարահյուսական պաշտոնով: Որպես որոշիչ կիրառվում են առանց բացառության բոլոր բայերի հարակատար դերբայները, օրինակ՝ *քնուց դղա, թողուց կործ, կողծուց կերան* և այլն:

Անվանական կիրառության դեպքում հարակատարը կաղաղ է հոլովվել՝ ենթարկվելով ի հոլովման: Օրինակ՝ *Էրվուզի դէխեր մածէր ին:*

Հարակատար է կազմվում նաև փոխառյալ բառերից՝ **-ուգ** ածանցի օգնությամբ՝ *ջնջիւ-ջնջուց, հինա-հինուց, սուրմա-սուրմուց, ռէմօնա-ռէմօնուց, պօլ-պօլուց* և այլն:

### **Կախյալ դերբայներ**

**Կատարելի (ապառնի) դերբայն** ունի ու վերջավորությունը: Այն համապատասխանում է զոբաբայան **-ի-ով** ապառնիին: Հմտ. *բարիլ-բարէլու, գարտալ-գարտալու*: Միջին հայերենից սկսած այն օժանդակ բայի հետ մասնակցում է կատարելի ներկա և կատարելի անցյալ ժամանակների կազմությանը: Բարբառում ևս հանդիպում ենք կատարելիի այս կիրառությանը, այսպես՝ *գարտալու ըմ, գարտալու էնկ, բարէլու ըմ, բարէլու էնկ* և այլն: Կատարելի դերբայով կազմված դիմավոր ձևերն ունեն մասնակի կիրառություն: Այս բաղադրյալ ժամանակային ձևերի իմաստն արտահայտվում է ներկայի և հարկադրականի բղթի մասնիկի օգնությամբ, ընդ որում՝ առաջինը կատարելի ներկայի, երկրորդը անցյալի համար: Ա. Ղարիբյանը այս երևույթն առանձնացնում է մի շարք արևմտյան բարբառների՝ Կարնո, Տիգրանակերտի, Շապին-Գարահիսարի համար, որտեղ ապառնիի իմաստն արտահայտվում է *բիլի-բրդը, բի, բը, բըլի* մասնիկներով<sup>10</sup>:

**Վաղակատար դերբայն** ունի **-էր** վերջավորությունը: Այն զոբաբարի անցյալ դերբայի-եալ վերջավորության հետագա զարգացումն է՝ **եալ>էր** հնչյունափոխությամբ: Այս դեպքում ևս գործում է բարբառին բնորոշ **եա>է** հնչյունափոխությունը: Դեռևս միջին հայերենում հանդիպում ենք այս դերբայի **եր** վերջավորությամբ արտահայտությամբ, որը հետագայում առավել տարածում է գտնում կը ճյուղի բարբառներում: **-էր** վերջավորությունը դրվում է անորոշի կամ կատարյալի հիմքի վրա:

Վաղակատար դերբայը բարբառում հարադրվում է օժանդակ բայի հետ՝ կազմելով սահմանական եղանակի վաղակատար ներկա և անցյալ բաղադրյալ ժամանակաձևերը: Անվանական կիրառություն չունի:

**Ժխտական դերբայն** ունի **-ի, -ը(ա)** վերջավորությունները: **-ի** վերջավորությունն են ունենում **-իլ** լծորդության, իսկ **-ը(ա)** վերջավորությունը՝ **-ալ** լծորդության բայերը, այսպես՝ *երկիլ-երկի, խաղալ-խաղը(ա)*: Ինչպես տեսնում ենք, այս դերբայն առաջացել է անորոշից և վերջավորության անկումով: Եվ **-ալ** և **-իլ** լծորդության բայերի ժխտական դերբայը կազմվում է անորոշի հիմքից: Ժխտական դերբայն անկախ կիրառություն չունի, այն մասնակցում է պայմանական եղանակի ապառնիի ու անցյալի ժխտական ձևերի կազմությանը: Ներգործական սեռի բայերի այսպիսի կիրառությունը կաղաղ է արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ:

### **Անկախ դերբայներ**

**Ենթակայական դերբայը** զոբաբարից սկսած ունի **-ող** կամ **-օղ** վերջավորությունը: Բարբառում այն կազմվում է երկու հիմքից՝ իլ լծորդության բայերի **-օղ** վերջավորությունը դրվում է *անորոշի հիմքի* վրա, իսկ **ալ** լծորդությանը՝ *կատարյալի հիմքի* վրա: Ենթակայական դերբայը եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում: Խոսքի մեջ ունի անվանական կիրառություն: Յուրյ տալով ժամանակի որևէ հատվածում գործողություն կատարող անձ կամ առարկա՝ այն հանդես է գալիս իբրև ենթակա, գոյական անդամի լրացում և ենթարկվում է ի հոլովման: Օժանդակ բայի անցյալի ու ներկայի հետ կազմում է բայական բաղադրյալ ձևեր՝ հանդես գալով իբրև ստորոգյալ կազմող բառ: Օր.՝ *Կրօղ կնած* (ենթակա): *Էզօղ նախիր մերուն չեր* (որոշիչ):

<sup>10</sup> Տե՛ս Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 190:

**Չևի դերբայը** բարբառում ավելի սահմանափակ կիրառություն ունի, կազմվում է ման ածանցով (հավանաբար նման բառից), որն ավելանում է շեզոք սեռի բայահիմքերի վրա, օրինակ՝ *վազրման, քլման, նաղրման, գանճրման, լայման*: Այն ունի անվանական կիրառություն, ցույց է տալիս մի գործողության կերպ, ձև, որին համընթաց կատարվում է հիմնական գործողությունը: Նախադասության մեջ սովորաբար հանդես է գալիս ձևի պարագայի շարահյուսական պաշտոնով և որպես կանոն նախադասվում է դիմավոր բայով արտահայտված ստորոգյալին: Այսպես՝ *գանճրման-կանգնած, զրզրման-կզած, լարման-լարած, լայման-լացելով* և այլն: Օր.՝ Բըզդիզ *լայման* գիկեր: *Վազրման* կածի կեղի ռեսը դուն:

**Ապառնի երկրորդ դերբայն** ունի իք>իկ վերջավորությունը, որը դրվում է անորոշի իլ և ալ լծորդությունների վրա: Իկ վերջավորությամբ ոչ բոլոր բայերից է կազմվում դերբայ: Ունի հիմնականում անվանական կիրառություն և կարող է հոլովվել ի հոլովիչով: Խոսքում հանդես է գալիս իբրև որոշիչ, լրացում՝ *ասելիկ խօսկ, դեսնելիկ պան* և այլն: Հարադրվելով օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հետ՝ կարող է կազմել նաև բայական բաղադրյալ ձևեր՝ հանդես գալով իբրև ստորոգյալ կազմող բառ՝ *մեռնելիկ էնկ, հակնելիկ ր* և այլն:

Ընդհանրացնելով կարող ենք արժանագրել, որ Սասունի բարբառում կախյալ են *կատարելի, վաղակատար* և *ժխտական* դերբայները, անկախ են *ենթակայական, ձևի* և *ապառնի երկրորդ* դերբայները, ընդհանրական՝ *անորոշն* ու *հարակատարը*: Ինչպես հայերենի բոլոր դրսևորումներում, այնպես էլ բարբառում բայի անդեն ձևերը նշույթավորված են, բնութագրվում են սեռի քերականական կարգով և հիմնականում հին հայերենի համապատասխան ձևերի համարժեքներն են:

**Л. С. ГАЛСТЯН - Особенности безличных форм глагола в Сасунском диалекте.** - Статья представляет ряд грамматических и морфологических особенностей системы причастий сасунского диалекта. Материалом исследования послужило наречие сасунцев, собравшихся-обасновавшихся в деревне Ашнак из более чем тридцати поселений исторического Сасуна. Как и во всех формах армянского, в сасунском диалекте безличные формы глагола являются маркированными, характеризуются грамматической категорией рода и в основном равнозначны соответствующим формам древнеармянского языка.